ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾՈՒԼՈՒՄ է թէ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և թէ Զ. ԳԻՊԴՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Մատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԳԱՄԵԱՆԻՆ, հրատարակութիւն Ս. Արծրունոյ։ Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ։ Գինն է 1 ր. 25 կ.։

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particuliers sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

3—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՀԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ։ Լիմն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.։ Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում։

Ստորագրվել կարելի է՝ ԳԻՊԴՈՐԵԱՆՔՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՔԱԷԼԻԱՆ-ՅԱԿՈՒԲԵՆԻՆ։

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բոկի «Սուտն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ Գրքի պատիսը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում։ Գինն է 35 կոպ.

Ելեւմտաց գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Օ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում։

1. Ընդամենն—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.։
2. Դոկտոր Բոկ—Սուտն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.։
3. Ֆրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.։
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն Հայոց զգրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.։
5. Դամանուրիա թիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.։
6. Նոյնը կազմած — 25 կ.։
7. Սիրվիո Փելլիքոի Հոխիմիացին Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօնարդիի առ Խոտիան. Տարբոյ ծերը։ Ամ. Եր. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.։

9—10

Պ. ԱԳԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԻՊԴԱՐԻՆԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՁԱԹԵԱՆ դասեր տալ։ Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ։ Դասերը կ՚տրվի է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով։ Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար։

10—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Երկուշաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Գօրլեվիչ ներքին հ., Բոխենեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շաեմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բոգազի հ., Ինչխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցով և Վերշիվ ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցով և Բուդկովսկի ներքին հ., Շաեմբրօրսկի վիներական և կաշու հ., Ատաուծատուրով կանանց հիւանդութիւններ։

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բոգազի հ., Բոտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Դավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաեմբրօրսկի և Ատաուծատուրով վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.։

Շաբաթ. Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվճար ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բաբաև չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը։

Առտնիարոյ Օրբելիա ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցով։

Մ. Միքանաբեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամէն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Ս. Ներսէս և փոքր փոքրցների սեպհական տանը, № 42, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով։

1. Հայկական Դէնք, երգարան, 8 ծալ. եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուքը միասին . . . . . 70 կ.
4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու։
2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ. եր. 274 . . . . . 20 կ.
1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու։
3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես։ 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու։ . . . . . 10 կ.
4. Կանոնաւոր մեանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը։ № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստոպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստոպ, մօտ 1360 բուբլու։ Թերթը մի կողմից պակաս։
5. Տողաշարներև տողացանցեր մեծ թաղաղ, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.
6. Կօմբ ուսուցչապետի և անգղիացուց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր 300։ . . . . . 15 կ.
1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու։
Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու։
Տպագրողը ինքը բնակվում է Պ. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում։ Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին. հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственный домъ № 13.

Դուրս եկաւ

ՀԱՅԱԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂԱՊԻՏԵԱՄԲ

Զանազանութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի։ Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ բուբլի։ Վաճառվում է յօգուտ Վանայ սոփատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում։ Գումարող առնողներին զիջումն կը լինի։ Օտարաքաղաքացիք դիմում են հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Ցանկացողները ստանալ միասին և «Յիսնաղի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկին մէկ բուբլ երեսուն կոպ.։

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԼԵՑ իշան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ։ Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Փաստաւէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով, կոնֆիկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.։

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երիտասարդ տալիս է հաշուապահութեան դասերը՝ բանկի, ֆաբրիկայի, առևտրական կոմպիսիոնէրութեան, երկաթուղու և այլն։

Հայցնել Թիֆլիսի Կազմէրի Պալատում, կամ Սուրբ Նշանի փողոցում, Միրզոյ սուզի դիմացը, № 17 պ. Յակոբ Տէր-Յակոբեանցին։

4—5

Կուկիրոյ Սուրբ Աստուածածնայ Եկեղեցոյ «Թանդրյանց» օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը, տալիս է կապալաւ նոյն ուսումնարանապատկան կրպակները և սենեակները։ Պայմանախօսութիւնը կարելի է կարդալ նոյն ուսումնարանում ամենայն օր, իսկ ձեռագրվելութիւնը կը լինի ամսոյս 24-ին առաւօտեան 10 ժամին։

1—2

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան կանոնագրութիւնը։ Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով։

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Աւետարան բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը։ Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Արգար Յովհաննիսեանին։ Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան։

7—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Օն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Արքայամ Լինկոլն» սարուկներին ազատող Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Մուսանացողներին խրատ» հայերէն թարգմանութիւններ։

Թարգմանվումն Մոլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Վեցն հիւանդ» կատակերգութիւններ։

Անցած փետրվարի 17-ից Նոտարական սովորով վերջացնելով բոլոր գրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-գ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մանաւոր և բանային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտաւորագիրներ և ակտեր, նոյնանշանակ են համարում և ինձ պարտաւորչիմ համարում վճարել։

Թիֆլիսի 2-գ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ։

Дозволено Цензурою 4 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона